ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 255-Ա

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-211 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով «Էլիտ-քնսթրաքշն» ՍՊ ընկերության դիմումը, ինչպես նաև Վայք համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 25-ի թիվ 69-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Սարավան բնակավայրում գտնվող 10-039-0304-0133, 10-039-0304-0135, 10-039-0307-0091, 10-039-0307-0093, 10-039-0307-0095, 10-039-0307-0096, 10-039-0307-0098, 10-039-0307-0099, 10-039-0310-0018 և 10-039-0310-0020 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.01512 հա, 0.00762 հա, 0.23368 հա, 0.01369 հա, 0.02776 հա, 0.0814 հա, 0.05206 հա, 0.03884 հա, 0.04579 հա և 0.02488 հա մակերեսներով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատեսքերը «Էլիտ սոլար» արևային ֆոտովոլտային կայանի բարձրավոլտ օդային գծերի կառուցման նպատակով, սերվիտուտով (սահմանափակ օգտագործման իրավունք) տրամադրել «Էլիտ-քնսթրաքշն» ՍՊ ընկերությանը:
2. «Էլիտ-քնսթրաքշն» ՍՊ ընկերության հետ կնքել սերվիտուտի պայմանագրեր՝ 10 (տասը) տարի ժամկետով:
3. Սերվիտուտի տրամադրման տարեկան վճար ընդունել՝ տարեկան 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Վարձավճարը գանձել յուրաքանչյուր տարվա մինչև դեկտեմբերի 20-ը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 256-Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 75-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» 2011 թ-ի նոյեմբերի 10-ի թիվ 1582-Ն որոշմամբ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ստեղծել Վայք համայնքի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման հանձնաժողով:
2. Հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մխիթար Մաթևոսյան / համայնքի ղեկավար /
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Գարիկ Սարգսյան /համայնքի ղեկավարի տեղակալ /
Հանձնաժողովի քարտուղար՝ Գարիկ Գևորգյան /ԳԲ բաժնի պետ /

Անդամներ ՝

Սամվել Իխտիարյան / ՔՀԿՏ- բաժնի պետ /
Նորայր Հովակիմյան / ՋԾՍԱԱ- բաժնի պետ /
Ֆելիքս Մուրադյան / համայնքի ղեկավարի օգնական /
Հովսեփ Զաքարյան / իրավաբան /

3.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 14.04.2022 թվականի թիվ 75-Ա որոշումը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
էլ. Փոստ vayktown@mail.ru

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 257-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ (ՊԵՏԱԿԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 317-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային (պետական) սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մխիթար Մաթևոսյան / համայնքի ղեկավար /
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Մեսրոպ Մեսրոպյան / համայնքի ղեկավարի օգնական /
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Ղազարյան / աշխատակազմի քարտուղար /
Անդամներ ՝
Սամվել Իխտիարյան / քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ /,
Ռոման Մկրտչյան / քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ /,
Գագիկ Մուշկամբարյան / ֆինանսատնտեսագիտական, եկմուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ / ,
Գարիկ Գևորգյան / գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ /
Վարդան Կոստանյան / Վայք համայնքի ավագանու անդամ /,
Հրաչիկ Մանուչարյան /Վայք համայնքի ավագանու անդամ /:

2.Հանձնաժողովի աճուրդավար նշանակել հաձնաժողովի նախագահ Մխիթար Մաթևոսյանին, արձանագրող՝ աշխատակազմի քարտուղար Անուշ Ղազարյանին:

3.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 317-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
էլ. Փոստ vayktown@mail.ru

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 258-Ա

ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԼՈՒՍԵՐԵՍ ՍՊԱՐՏԱԿԻ ԱԲԵԼՅԱՆԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 2008թ.-ի նոյեմբերի 13-ի ««Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին»՝ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1328-Ն որոշմամբ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերականգնել Վայք քաղաքի բնակչուհի Լուսերես Սպարտակի Աբելյանի /ծնված 14.10.1963թ./ բնակելի նշանակության 1974 թվականին կառուցված 43.1 քմ մակերեսով բնակելի տան, դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա 0,04 հա հողամասի հողհատկացման հիմքերը՝ ըստ սույն որոշման անբաժանելի մաս կազմող շինությունների և հողամասի հատակագծերի:
2. Սույն որոշման առաջին կետում նշված շինություններին՝ զբաղեցրած և սպասարկման համար սահմանազատված հողամասով տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայք համայնք, քաղաք Վայք, Ջերմուկի խճուղի 46 բնակելի տուն:
3. Սույն որոշման 1-րդ կետում նշված բնակելի կառուցապատման 0,04 հա սահմանազատված հողամասը, չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 259-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 5 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Անդրանիկ Հայրապետի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Գոմք բնակավայրի 1-ին փողոցի 5 բնակելի տուն հասցեում գտնվող 0.42 հա մակերեսով, 10-019-0030-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորին տրամադրել հետևյալ հասցեն.

- Վայք համայնք, Գոմք, 1-ին փողոց, 5 բնակելի տուն, մակերեսը՝ 0.33715 հա,

- Վայք համայնք, Գոմք, 1-ին փողոց, 5/1 հողամաս, մակերեսը՝ 0.08284 հա,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ